

բանին պատի արձանագրութեան մէջ կը յիշատակուի.

«Յիշատակ է սբ. Նշանս Դաւիթ սարկաւազին, Խոջատուր հրիցուն, Մարգարտին, Մարիամին, Սառային. ի թվ. ԶԸ (=1459), օգոստ. 1»:

ԴԱԻԻԹ ՎՐԴ. ԱՐԵԻԵԼՅԻ.—Մբ. Ս. Էջմիածնի. ՊԿ. (1639-41), Բ. անգամ, (1643-44), Գ. անգամ, (1645-49), Դ. անգամ, (1650-1651): Լատին կրօնաւորներու եւ մասնաւորապէս Կղեմէս Կարնոսի դէմ կը պաշտպանէ հայ եկեղեցին: Հրաժարելէ վերջ կը մեկնի Պոլսէն եւ կուգայ Հայէպ՝ ուրիկ ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը. (Տաշ. Յոյց. էջ 840-41):

ԴԱԻԻԹ ՎՐԴ. ԳԱՂԱՏԱՅԻ.—Մբ. Ս. Կարապետի (Կեսարիա), եւ եղբայր Գարթալի Տ. Նշան քհ. ի, 1857 ին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը եւ կը մեկնի Պոլիս:

ԴԱԻԻԹ ՎՐԴ. ԽԱՉՍՏՈՒՐԵԱՆ, ՎԱՆՅԻ.—Մբ. Ծ. 1808ին, Զռ. 1862ին. ՏՊ. 1871ին. ժամորար Դամասկոսի (1873-1879):

ԴԱԻԻԹ ՎՐԴ. ԿԱՐԿԱՌԵՅԻ. 1656 ին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը, 1657ին կը մեկնի Պոլիս Ս. Յակոբի վանքին սեպհականութեանց վէճերը կարգադրելու համար. Առ. Հալէպի (1663-1668), հակաթոռ կ'իջ. Բերիոյ մէջ (1669-1679). ուր եւ կը վախճանի 1679 ին. (ԺՊԵ. հտր. Ա. էջ 390-91):

Դաւիթ վրդ. 1674ին իր կաթողիկոսութեան ժամանակ թուղթ մը գրած է Հռովմ. եւ իր այս թուղթը կ'սկսի հետեւեալ բառերով. «Յի. Քի. ծառայ Դաւիթ կաթողիկոս ամ. Հայոց եւ Պատրիարք սբ. աթոռոյն Երուսաղիմայ»: Նոյն թուղթը կը վերջանայ սա բառերով. «գրեցաւ իշխանական թուղթս ի մայրաքաղաքս ի Տարսոն ձեռամբ Սարգիս Սարկաւազին»: (Tisserant, թ. 65, էջ 105):

ԴԱԻԻԹ ՎՐԴ. ԿԱՐՃԱՀԱՍԱԿ.—Մբ. 1762ին:

ԴԱԻԻԹ ՎՐԴ. ԿԻՒՐԻՆՅԻ.—Մբ. 1875ին, Ծ. 1819ին, Զռ. 1869ին Սիս. ժամորար Դամասկոսի (1878-80). 1889ին կը հրաժարի Միաբանութենէն:

ԴԱԻԻԹ ՎՐԴ. ՄԱՐԱՇՅԻ.—Մբ. 1876 ին:

ԴԱԻԻԹ ՎՐԴ. ՄՈԿԱՅԻ.—Մբ. Լս. 1680 ին. իր նուիրած յիշատակի մասին (ՄԶ. թ. 532):